Հավելված
Տեղ համայնքի ավագանու 2023թվականի
մարտի 10-ի N 17-Ա որոշման

Տեղ համայնքի 2022թվականի տարեկան աշխատանքային պլանի
ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

/հազ. դրամ/

N/N	Ծրագրի անվանումը	Ներդրումների չափը՝ հազ.դրամ	Ֆինանսավորման աղբյուրը	Ծանոթություն
1	Քարաշեն բնակավայրի վարչական շենքի տանիքի վերանորոգում:	5800,1	Տեղի համայնքապետարան	Կատարված է
2	Փողոցների լուսավուրում՝ Խնածախ, Վաղատուր, Խոզնավար, Տեղ, Կոռնիձոր, Արավուս և Քարաշեն բնակավայրերում:	997,7 988,0 545,3	Տեղի համայնքապետարան	Կատարված է
3	Տեղի <Կոմունալ սպասարկում և բարեկարգում> ՀՈԱԿ-ին կից հրշեջ մեքենայի կայանատեղիի կառուցում:	6303,6	Տեղի համայնքապետարան	Կատարված է
4	Քարաշեն բնակավայրի վարչական շենքի 2-րդ հարկի կապիտալ վերանորոգում:	2923,8	Տեղի համայնքապետարան	Կատարված է
5	Տեղի համայնքային զարգացման կենտրոնի հիմնանորոգում:	21886,5 10000,0	Տեղի համայնքապետարան և GIZ կազմակերպություն	Կատարված է
6	Տեղ բնակավայրում՝ խաղահրապարակ- ժամանցային կենտրոնի կառուցում:	4845,0 5259,0	ՀՀ կառավարություն Համայնքի բյուջե	Սուբվենցիոն ծրագիր
7	Վաղատուր բնակավայրում՝ նախակրթարանի վերանորոգում:	1427,2	Տեղի համայնքապետարան	Կատարված է
8	Տեղ բնակավայրի՝ Մելիք Բարխուդարի ամարաթի տանիքի կապիտալ նորոգում:	7070,0 2875,2	ՈՒրբան կայուն զարգացման հիմնադրամ Տեղի համայնքապետարան	Կատարված է
9	Տեղ բնակավայրի ոռոգման ներտնտեսային ցանցի վերանորոգում:	Խողովակներ, կցամասեր և զոդման ապարատ: 4856,1	ՄԱԿ-ի Պարենի գրասենյակ, Կարմիր Խաչի միջազգային կոմիտե, Տեղի համայնքապետարան	Կատարված է
10	Կոռնիձոր բնակավայրի՝ ոռոգման ներտնտեսային ցանցի կապիտալ հիմնանորոգում:	13343,4	Երևանի քաղաքապետարան	Կատարված է

11	Խոզնավար բնակավայրի ոռոգման ներտնտեսային ցանցի վերանորոգման աշխատանքների հեղինակային հսկողություն	38,7	Տեղի համայնքապետարան	Կատարված է
12	Շոր աղբյուրի կառուցման աշխատանքներ	700,0	Տեղի համայնքապետարան	Կատարված է
Ընդամենը կատարվել է		89859,6		Կատարված է

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Դ. ՂՈՒԼՈՒՆՑ**

«Փըրֆեքթ Աուդիտ» ՍՊԸ
Հասցե՝ ՀՀ, քաղաք Երևան, Տիգրան Մեծի 4
ՀՎՀՀ՝ 02591995
Հեռ./ֆաքս՝ /010/ 524 724

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՏԵՂ ՀԱՄԱՅՆՔԻ 2022Թ.Ի ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ԱՈՒԴԻՏԻ

Համայնքի բյուջեն տեղական ինքնակառավարման մարմիններին Սահմանադրությամբ և օրենքներով վերապահված լիազորությունների իրականացման համար անհրաժեշտ դրամական միջոցների ձևավորման և ծախսման ֆինանսական ծրագիր է: Համայնքի բյուջեն ակնկալվող եկամուտների և առաջարկվող ծախսերի համապարփակ թվարկումն է գալիք ֆինանսական տարվա համար, կառավարման մարմինների յուրաքանչյուր գործառույթի գծով: Համայնքի բյուջեի որպես կառավարման միջոց կարող է օգնել համայնքին սահմանելու և գնահատելու համայնքային ստորաբաժանումների գործունեության արդյունավետությունը: Այն հնարավորություն է տալիս բարձրացնելու համայնքի կառավարման պատասխանատվությունը և հաշվետու լինելու աստիճանը: Բյուջեի առավել արդյունավետ, օգտավետ, նպատակային լինելու տեսանկյունից շատ կարևոր է բյուջեի կատարման նկատմամբ պարբերական հսկողության իրականացումը, ինչպես նաև բյուջեի կատարողականի վերլուծության ենթարկումը:

Տեղ համայնքի ղեկավարի 2022 թվականի դեկտեմբերի 21-ի թիվ 230-Ա որոշմամբ հաստատված Տեղի համայնքապետարանի ներքին աուդիտի 2022 թվականի տարեկան ծրագրի համաձայն իրականացվել է Տեղի համայնքապետարանի աշխատակազմի բյուջետավորման գործընթացի, ծախսերի ըստ բյուջետային գործառնական և տնտեսագիտական դասակարգման կատարման կատարողական աուդիտ, որի շրջանակներում ուսումնասիրվել և վերլուծվել է կից ներկայացվող ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են 2022 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ բյուջեի կատարման եկամուտների և ծախսերի հաշվետվությունները:

Վերլուծության արդյունքում պարզվել է, որ թեև բյուջեն կազմելիս հիմքում դրվել են նախորդ տարիների ցուցանիշների համեմատականները (դինամիկան), այդուհանդերձ արձանագրվել են թերկատարումներ որոշ եկամուտների և ծախսային ուղղությունների մասով: Կատարված վերլուծությունները, ներկայացված բացատրություններն և պարզաբանումները ներկայացված են ստորև .

Սյունիքի մարզի Տեղ համայնքի 2022թ. բյուջեի կատարման տարեկան հաշվետվության կատարողականի աուդիտ

Տեղ համայնքի 2022թ.-ի բյուջեի ամփոփ աղյուսակ եկամուտների գծով

/հազ.դրամ/

Հոդվածների անվանումը	Եկամուտների պլան	Ճշտված պլան	Փաստացի մաս	Շեղում գումարով		
				+	-	%
1. Հարկային եկամուտ	**43789.1**	**51071.4**	**57485.4**	**6414**		**112.6%**
ա) անշարժ գույքի հարկ	31857.1	28863.4	38575.9	9712.5		133.6%
բ) գույքային հարկեր այլ գույքից	11178.4	21454.5	17923		3531.5	83.5%
գ) տուրքեր	753.6	753.6	986.5	232.9		130.9%
2. Պաշտոնական դրամաշնորհներ	**164124.5**	**180904.7**	**185770.5**	**4865.8**		**102.7%**
ա) դոտացիա	164124.5	164124.5	164145.3	20.8		100.0%
բ) սուբվենցիա	0.0	16780.2	21625.2	4845		128.9%
3.Այլ եկամուտներ	**30108.1**	**54823.0**	**59336.2**	**4513.2**		**108.2%**
ա) գույքի վարձակալությունից եկամուտներ	9702.1	8385.8	9689.6	1303.8		115.5%
բ) վարչական գանձումներից	8440.0	8440.0	9900.1	1460.1		117.3%
գ) Կապիտալ ոչ պաշտոնական դրամաշնորհներ	0.0	31997.2	31997.2	0.0		100.0%
դ) Այլ մուտքեր	11966.0	6000.0	7749.4	1749.4		129.2%
Ընդամենը	**238021.7**	**286799.1**	**302592.1**	**15793**		**105.5%**

Տեղ համայնքի 2022թ. բյուջեի կատարման ամփոփ աղյուսակ ծախսերի գծով

/հազ.դրամ/

Հոդվածների անվանումը	Ծախսերի պլան	Ճշտված պլան	Փաստացի մաս	Շեղում գումարով		
				+	-	%
1.Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ	97641.7	143014.9	131012.9		12002	91.6%
2.Պաշտպանություն	2890.0	3582.0	2701.9		880.1	75.4%
3.Տնտեսական հարաբերություններ	35100.0	33484.6	27008.9		6475.7	80.7%
4. Շրջակա միջավայրի պաշտպանություն	14910.0	18599.9	17995.9		-604	96.8%
5.Բնակարանային շինարարություն և կոմունալ ծառայություն	14090.0	54654.5	43678.1		10976.4	79.9%
6.Հանգիստ, մշակույթ և կրոն	6140.0	13937.7	11652.6		2285.1	83.6%
7.Կրթություն	49500.0	73976.8	71764.7		2212.1	97.0%
8.Սոցիալական պաշտպանություն	5750.0	5750.0	1870.0		3880	32.5%
9.Հիմնական բաժիններին չդասվող պահուստային ֆոնդեր	12000	500	0		500	0%
Ընդամենը	**238021.7**	**347500.4**	**307685.0**		**39815.4**	**88.5%**

Բյուջետային միջոցների ազատ մնացորդը 31.12.2022թ. կազմել է 17184,123 հազար ՀՀ դրամ ֆոնդային մասով և 38424,403 հազար ՀՀ դրամ՝ վարչական մասով:

2022 թվականին համայնքի բյուջեով նախատեսված որոշ եկամտատեսակների գծով կատարվել են թերհավաքագրումներ և գործառնական դասակարգման որոշ ծրագրերով նախատեսված մի շարք ծախսեր չեն կատարվել, որոնց վերաբերյալ ղեկավարության կողմից ներկայացվել են ներքոհիշյալ բացատրություններն ու պարզաբանումները.

Եկամուտներ

2022 թվականին համայնքի բյուջեով նախատեսված եկամտատեսակների գծով հավաքագրումները մեծամասամբ կատարվել են գերակատարումներով: Բացի ստորև նշված հարկատեսակից, որի համար ներկայացնում ենք ղեկավար կազմի կողմից կատարած պարզաբանումները:

1) Գույքային հարկեր այլ գույքից՝ /83.5%/ 17 923 000 ՀՀ դրամ

   Այս հարկատեսակի հավաքագրման թերակատարումը պայմանավորված է հակառակորդի կողմից սանձազերծած ագրեսիայի արդյունքում գյուղական տնտեսությունների կողմից անասնակերի հավաքագրման ցածր տոկոսներով, անասնագլխաքանակի շեշտակի անկմամբ, որի արդյունքում գյուղական բնակչության կենսամակարդակը բավականին նվազել է:

Ծախսեր

2022 թվականին ըստ գործառնական դասակարգման ներքոհիշյալ ծրագրերով նախատեսված մի շարք ծախսեր չեն կատարվել, որոնց վերաբերյալ ղեկավարության կողմից ներկայացվել են հետևյալ բացատրություններն ու դիտարկումները.

1) Պաշտպանություն՝ /75.4%/ 2 701 900 ՀՀ դրամ

   Նշված ծախսային ուղղությամբ թերակատարումը պայմանավորված է 2022 թվականի սեպտեմբերի 13-ից հակառակորդի կողմից իրականացված լայնածավալ ագրեսիայի հետևանքները վերացնելուն ուղղված ֆինանսական ավելի մեծ միջոցների նախատեսմամբ վերջնական արդյունքում ավելի քիչ միջոցների ծախսմամբ:

2) Տնտեսական հարաբերություններ՝ /80,7%/ 27 008 900 ՀՀ դրամ

   Տնտեսական հարաբերությունների առումով գյուղատնտեսության և ճանապարհային տրանսպորտի ոլորտներում թերակատարումները մեծապես պայմանավորված են հակակարկտային կայանների ձեռք չբերմամբ, ինչպես նաև նախօրոք պլանավորված ճանապարհների վերանորոգման նպատակով հատկացված գումարների խնայմամբ, որի պատճառը հանդիսացավ Արցախը մայր Հայաստանին կապող ճանապարհի կառուցման ժամանակ՝ Ճանապարհային դեպարտամենտի կողմից համայնքին տրված ասֆալտի մնացորդային մեծ պաշարները: Ինչի շնորհիվ բարեկարգվել են Մ2 մայրուղուց դեպի թիվ 2 դպրոց տանող ճանապարհն ու մի շարք ծրագրերով նախատեսված այլ բարեկարգումներ:

3) Բնակարանային շինարարություն և կոմունալ ծառայություն՝ /79.9%/ 43 678 100 ՀՀ դրամ

   Բնակարանային շինարարություն և կոմունալ ծառայությունների մատուցման առումով թերակատարումը պայմանավորված է եղել նախորոք պլանավորված նախագծային աշխատանքների չկատարմամբ: Դրանց շարքին են դասվում Տեղի ոռոգման ներտնտեսային ցանցի կապիտալ վերանորոգման 3-րդ փուլի աշխատանքները և Վաղատուրի խմելու ջրի ջրագծի

նախագծանախահաշվային աշխատանքները: Սրանք չեն իրագործվել ժամանակային ինչ-ինչ պատճառներով, ռազմաքաղաքական և սահմանային լարված իրավիճակներով պայմանավորված:

Իսկ բազմաբնակարան շենքերի հարթ տանիքների վերանորոգման ծրագրով նախատեսված գումարը ամբողջությամբ սպառվել է համայնքին պատկանող հրշեջ մեքենայի համար կայանատեղիի կառուցման աշխատանքներում:

4) Հանգիստ, մշակույթ և կրոն՝ /83.6%/ 11 652 600 ՀՀ դրամ

Նշված ոլորտում ծախսային թերակատարումը պայմանավորված է եղել 2022 թվականի սեպտեմբերին հակառակորդի կողմից սանձազերծած ագրեսիայի արդյունքում որոշ շինարարական աշխատանքների իրականացման հետձգմամբ՝ հետագայում իրագործելու ակնկալիքով:

5) Սոցիալական պաշտպանություն՝ /32.5%/ 1 870 000 ՀՀ դրամ

Սոցիալական պաշտպանության առումով ծախսային թերակատարումը պայմանավորված է եղել մի շարք օտարերկրյա և ներքին բարերարների և բարեգործական կազմակերպությունների կողմից բազմապիսի սոցիալական ծրագրերի և օժանդակությունների բնակիչներին տրամադրմամբ: Եվ այս գործում համայնքին մնում էր մատնանշել և ցուցակագրել համայնքի խոցելի խմբերին ու կարիքավոր ընտանիքներին:

<u>Առաջարկություններ</u>

Իրականացված վերլուծության արդյունքում պարզվել է, որ բյուջեի կատարողականը բոլոր էական առումներով հիմնականում ճշմարիտ է ներկայացնում Տեղ համայնքի 2022 թվականի բյուջեի կատարման եկամուտների և ծախսերի մասին 2022 թվականի ընթացքում և դեկտեմբերի 31-ի դրությամբ առկա իրական պատկերները՝ «Բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի պահանջներին համապատասխան:

Սակայն առավել արդյունավետ և արդյունքահեն բյուջեի ձևավորման նպատակով առաջարկում ենք.

- Հաջորդ տարիների համար բյուջեի նախագծման գործընթացում վերլուծվող ցուցանիշների մշակման հիմքում դնել որոշակի չափանիշներ, որոնցից են՝ Ճշտությունը (հնարավոր է արդյոք ժամանակի ընթացքում պարզել ցուցանիշի ճշտության աստիճանը), Կայունությունը (եթե ցուցանիշի գնահատումը պարբերաբար կրկնվի, արդյոք արդյունքները կայուն կլինեն), Ամբողջականությունը (արդյոք ցուցանիշը տալիս է իրավիճակի ամբողջական պատկերը), Վերահսկելու հնարավորությունը (արդյոք օգտագործողը կարող է վերհսկել և կարգավորել ծառայության ֆունկցիոնալ ցուցանիշները), Համեմատելիությունը (կարող է արդյոք ցուցանիշն օգնագործվել այլ ժամանակահատվածում կամ այլ տարածաշրջանում գնահատված ցուցանիշների հետ համեմատության համար) և այլն:

- Ֆինանսական վիճակի բարելավման նպատակով՝ կատարել ճշգրտումներ անշարժ գույքի հարկի և փոխադրամիջոցների գույքահարկի բազաներում՝ ապահովելով բյուջեի մուտքերի կանխատեսելիությունը:

- Վերլուծել և կազմել նախորդ տարիներից կուտակված ապառքների հավաքագրման ժամանակացույց, որի հիման վրա ձևավորել առավել իրատեսական հավաքագրելի եկամուտների ցուցանիշներ:
- Կատարել Բյուջեի միջոցների հաշվին պահվող նախադպրոցական, արտադպրոցական և կոմունալ կազմակերպությունների առանձին ցուցանիշների մանրամասն վերլուծություններ:
- Ապահովել իրականացվելիք ծախսերի մասով հիմնավորվածության և անհրաժեշտության աստիճանների վերլուծություններ:

27 փետրվար 2023թ.

«ՓԵՐՖԵՔԹ ԱՈՒԴԻՏ» ՍՊԸ-ի տնօրեն՝ Ա. Բաբայան